ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/340

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի տնօրեն Լ. Ղոնյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 286.120.06569),

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա. Աբովյանի (լիազորագիր՝ տրված 07.01.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21478-2021 գրությամբ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 20.12.2021թ. թիվ 39/02-28-1011 գրության հիման վրա, 27.12.2021թ. թիվ 26/26-1/21478-2021 գրությամբ նախաձեռնել է «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.01.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ստորև ներկայացնում ենք «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) գրավոր դիրքորոշում՝ ՍՑ-ՆԳ-2021/340 ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեմ:

Ընթացակարգի քննության համար էական փաստերը

1. Ընկերությունը դիմել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, որի տեխնիկական բնութագրով որպես հատուկ պահանջ սահմանվել է, որ աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, ինչպես նաև «Հայաստանի 1. աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ անդամ:

2. Ընկերությունը գնանշման հարցման հանձնաժողովի նիստի նախորդող օրը՝ 24.11.2021թ. ներկայացնում է դիմում՝ Ընկերության կողմից ներկայացված հայտը անվավեր ճանաչելու և գնային առաջարկը հաշվի չառնելու մասին:

3. Գնանշման հարցման հանձնաժողովը 25.11.2021թ. արձանագրությամբ Ընկերության հայտում չի արձանագրում անհամապատասխանություն:

4. Հետագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 16.12.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 Որոշմամբ արձանագրել է, որ համաձայն իր 09.12.2021թ. «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին ուղղված հարցման պատասխան 13.12.2021թ. թիվ Ա/ԵՆ-111 գրության՝ «...Հաշվապահների միջազգային դաշնության անդամ կարող են լինել մասնագիտացված կազմակերպությունները: Ներկայումս այդ կազմակերպությունում անդամ է միայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ն»: Սույն որոշմամբ արձանագրվել է, որ

նշված գնման ընթացակարգին ոչ մի մասնակից չի բավարարում: Այս որոշումից հետևում է, որ այս գնման ընթացակարգին կարող էր մասնակցել միայն «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ն, սակայն եթե հանդիսանար աուդիտորական կազմակերպություն, իսկ այն չի հանդիսանում այդպիսին, այսինքն ստացվում է, որ «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին որևէ ընկերություն Հայաստանում չէր կարող մասնակցել:

5. 17.12.2021թ. գնման ընթացակարգը գնահատող հանձնաժողովի N 4 Արձանագրությամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

6. 17.12.2021թ. գնման ընթացակարգը գնահատող հանձնաժողովի N 4 Արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն կառավարության որոշմամբ հաստատված Կարգի 45-րդ կետի համաձայն դիմել լիազոր մարմին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: Հատկանշական է, որ համաձայն «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին Հայտարարության՝ «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, այսինքն՝ Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին: Ստացվում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պետք է ներառվեն բոլոր գնման մասնակից ընկերությունները:

7. «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն բացակայում են, քանի որ Ընկերության հայտը ճանաչվել է անբավարար և մերժվել:

Դիրքորոշումը հիմնավորող իրավական նորմերը

1. «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու գնման գործընթացին մասնակցելու հանգամանքից, իրավահավասարություն:

2. «Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպույուն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

3. «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը

4. «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Ամփոփելով վերոգրյալը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի սպառ բացակայում են «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն, ինչպես նաև գնման ընթացակարգով սահմանված են եղել ակնհայտ անհաղթահարելի չափանիշներ, որի հիմքով անբավարար են ճանաչվել բոլոր մասնակիցների հայտերը, ապա խնդրում ենք Ձեզ սույն դիրքորոշման մեջ փաստարկված հիմքերը հաշվի առնելով՝ ՍՑ-ՆԳ-2021/340 ընթացակարգի շրջանակներում «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ գնումների երի գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը դադարեցնել»:

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի տնօրենը և ներկայացուցիչը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/340 ընթացակարգի շրջանակներում 30.12.2021թ. ժամը 09:20-ին և 10.01.2022թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, մասնակցել են 10.01.2022թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.12.2021թ. թիվ 39/02-28-1011 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ. նոյեմբերի 10-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը որոշել է որպես ընտրված մասնակից հայտարարել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին՝ գործելով իրավաչափ և պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակից «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն 30.11.2021թ. ներկայացրել է N ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 ծածկագրով բողոքը: Հիշյալ բողոքի քննության արդյունքում պարզ է դարձել, որ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն չի բավարարում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, մասնավորապես վերջինս չի հանդիսանում Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 որոշումը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ և 34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները՝ Հանձնաժողովը որոշեց «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով: (...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/340 ընթացակարգի շրջանակներում 30.12.2021թ. ժամը 09:20-ին և 10.01.2022թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/340 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/340 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Քրոու ընդ Ասատրյանս» /ՀՎՀՀ 02618043/ ՍՊ, «Բեյքեր Թիլլի Արմենիա» /ՀՎՀՀ 02586575/ ՓԲ, «Բի-Դի-Օ Արմենիա» /ՀՎՀՀ 01569792/ ՓԲ, «Գրանթ Թորնթոն» /ՀՎՀՀ 00040569/ ՓԲ և «Երևան-Աուդիտ Կոնսալտ» /ՀՎՀՀ 02703411/ ՓԲ ընկերությունները:

2. Վերը թվարկված ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1-ի՝ դիմում-հայտարարությունների համաձայն՝ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ:

3. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1.1-ով՝ մատուցվող ծառայությունների նկարագրով, սահմանվել է հետևյալը.

«ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, ինչպես նաև «Հայաստանի աուդիտների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ անդամ:

Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ հանդիսացող ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:

Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկմուտով գնահատվող 30 լավագույն միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է

կայացրել, հիմք ընդունելով գնահատման թերթիկը, հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքը
1	«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ	բավարար
1	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	բավարար
1	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	բավարար
1	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ	բավարար
1	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	բավարար

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

Չափաբաժնի N	Մասնակցի		Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «x»	Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/
	Զբաղեցրած տեղ	Անվանում		
1	2	«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ		1,950,000.00
	3	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ		2,915,000.00
	5	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ		6,500,000.00
	1	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ	x	360,000.00
	4	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ		5,000,000.00

6. Ընթացակարգի շրջանակներում «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ. ներկայացվել է բողոք, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.12.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 որոշմամբ բավարարվել է մասնակի.

«1.Պարտավորեցնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1.1.Դադարեցնելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, նույն ընկերությանը հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

1.2 Ընդունելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշում:

2. Բողոքի պահանջը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նոր միաժամանակյա բանակցություններ

հրավիրելու մասին համապատասխան որոշում ընդունելուն պարտավորեցնելու մասով, մերժել»:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 որոշումը, որոշում է կայացրել «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

8. Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, 20.12.2021թ. թիվ 39/02-28-1011 գրությամբ ներկայացրել է լիազորված մարմնին, վերջինս էլ 27.12.2021թ. թիվ 26/26-1/21487-2021 գրությամբ նախաձեռնել է «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21487-2021 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 20.12.2021թ. թիվ 39/02-28-1011 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Քրոու ընդ Ասատրյանս» /ՀՎՀՀ 02618043/ ՍՊ, «Բեյքեր Թիլլի Արմենիա» /ՀՎՀՀ 02586575/ ՓԲ, «Բի-Դի-Օ Արմենիա» /ՀՎՀՀ 01569792/ ՓԲ, «Գրանթ Թորնթոն» /ՀՎՀՀ 00040569/ ՓԲ և «Երևան-Աուդիտ Կոնսալտ» /ՀՎՀՀ 02703411/ ՓԲ ընկերությունները:

Վերը թվարկված ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1-ի՝ դիմում-հայտարարությունների համաձայն՝ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1.1-ով՝ մատուցվող ծառայությունների նկարագրով, սահմանվել է հետևյալը.

«ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Աուդիտ իրականացնող ընկերությունը պետք է հանդիսանա Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (IFAC) լիարժեք անդամ, ինչպես նաև «Հայաստանի աուդիտների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ անդամ:

Աուդիտ իրականացնելու նպատակով առաջարկվող ֆեդերացիայի անդամ հանդիսացող ընկերության մասնաճյուղերը նույնպես պետք է հանդիսանան Ֆորումի անդամ:

Ընկերությունը պետք է հանդիսանա տարեկան եկմուտով գնահատվող 30 լավագույն միջազգային հաշվապահական ցանցերից կամ ասոցիացիաներից մեկը»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել, հիմք ընդունելով գնահատման թերթիկը, հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքը
1	«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ	բավարար
1	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	բավարար
1	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	բավարար
1	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ	բավարար
1	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	բավարար

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

Չափաբաժնի N	Մասնակցի		Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «x»	Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/
	Զբաղեցրած տեղ	Անվանում		
1	2	«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ		1,950,000.00
	3	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ		2,915,000.00
	5	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ		6,500,000.00
	1	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ	x	360,000.00
	4	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ		5,000,000.00

Ընթացակարգի շրջանակներում «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ.

ներկայացվել է բողոք, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.12.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 որոշմամբ բավարարվել է մասնակի.

«1.Պարտավորեցնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1.1.Դադարեցնելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, նույն ընկերությանը հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

1.2 Ընդունելու «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշում:

2. Բողոքի պահանջը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նոր միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում ընդունելուն պարտավորեցնելու մասով, մերժել»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/90 որոշումը, որոշում է կայացրել «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, 20.12.2021թ. թիվ 39/02-28-1011 գրությամբ ներկայացրել է լիազորված մարմնին, վերջինս էլ 27.12.2021թ. թիվ 26/26-1/21487-2021 գրությամբ նախաձեռնել է «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգ 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե **մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող**, կամ **մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը** կամ **ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը**, ապա **այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:**

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ **մասնակիցը** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը **հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:**

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված են այն դեպքերը, որոնք համարվում են մասնակցի կողմից ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և որոնք կարող են հանգեցնել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում ընդգրկելուն:

Ուստի՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ խախտում թույլ չի տրվել, որպիսի պայմաններում գտնում եմ, որ առկա չեն «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21478-2021 գրությամբ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**